ՍԵԴՐԱԿ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

Հայագիտությունը ծանր կորուստ կրեց։ Մայիսի 8-ին հանկարծամահ եղավ ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի անփոփոխ ղեկավար, Երևանի համալսարանի դասախոս, վաստակաշատ գիտնական Սեդրակ Գևորգի Բարխուդարյանը։ Կյանքից հեռացավ մի անխոնջ հետազոտող, որը խոշոր ավանդ ներդրեց հայ վիմագրական հուշարձանների գիտական ընդօրինակության, վերծանության և քննական ուսումնասիրության վերջին տասնամյակների նվաճումներում։

Սեդրակ Բարխուդարյանը ծնվել է 1898 թ. մարտի 21-ին Իրանում, պատմական Ատրպատականի Հավթվան հայաբնակ գյուղում։ 1915 թ. Բարխուդարյանների ընտանիքը բնակություն է հաստատում Թիֆլիսում, որտեղ պատանի Սեդրակը նախնական կրթություն է ստանում քաղաքի հայկական դպրոցում։ 1928 թ. Ս. Բարխուդարյանը փայլուն կերպով ավարտում է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը, որից հետո աշխատում է Նոր Բայազետի մանկավարժական տեխնիկումում, իբրև պատմության ուսուցիչ։

Հաշվի առնելով Ս. Բարխուդարյանի բացառիկ ընդունակությունները, մեծ հայագետ Մ. Աբեղյանի երաշխավորությամբ, 1932 թ. նա գիտական աշխատանքի է հրավիրվում Հայաստանի պետական պատմական թանգարան և այդ օրվանից ծավալում գիտական բեղմնավոր գործունեություն։ Արդեն 1935 թ. հրատարակած նրա առաջին աշխատությունը՝ «Վելիքովի երկիրը», ըստ արժանվույն պսակվում է հատուկ մրցանակով և իր տեղը նվաճում ուրարտագիտությանը նվիրված ուսումնասիրությունների շարքում, վկայելով հեղինակի հիմնավոր գիտելիքների և գիտական կուտ տրամաբանության մասին։

Հետագա տարիներին Ս. Բարխուդարյանն իր ուսուցիչ ակադեմիկոս Հ. Օրբելու հորդորանքով ամբողջությամբ նվիրվում է հայերեն վիմական արձանագրությունների ընդօրինակման ու գիտական հրապարակման դժվարին, բայց անհունորեն շնորհակալ գործին և մինչև իր կյանքի վերջին օրերը առաջ է տանում հայագիտության համար բացառիկ նշանակություն ունեցող «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի հրապարակումը։ Իր խոովահույզ կյանքի այդ գերագույն նպատակը իրագործելու համար Ս. Բարխուդարյանը շրջում է Սովետական Հայաստանի և հարակից շրջանների բոլոր հնա-

վայրերը, ուսումնասիրում հուշարձանները, հմտությամբ ընդօրինակում, վերականգնում, ամբարում «վիմագիր մատյանները»՝ դրանք վերծանելու, մեկնելու և թղթե մատյաններին հանձնելու համար։

Սկսած 1960 թ. մեկը մյուսի հետևից հրապարակ են դալիս «Դիվանի» երեք հատորները, իսկ Ս. Բարխուդարյանի սեղանին ծնունդ են առնում և սպասում իրենց հերթին մյուսները (ութ պրակ)։

Կլանված «Դիվանի» ամբողջացման գործերով, Ս. Բարխուդարյանը ժամանակ չէր գտնում զբաղվելու վիմական բնագրերի առանձին կողմերի քննությամբ։ Չնայած դրան, նա թողել է վիմագրական հուշարձանների ուսումնասիրությանը նվիրված մեծարժեք հոդվածներ, որոնցում սպառիչ կերպով մեկնել է հաճախ անլուծելի և առեղծվածային համարված բազ-

մաքիվ հարցեր։ Գիտական զարմանալի հոտառությամբ առանձին վիմագիր բեկորների միջոցով Ս. Բարխուդարյանը առաջին անգամ համոզիչ կերպով որոշում է Հերմոնի կրթա-գիտական դպրոցի տեղագրությունը կամ «էշմիածնի ավետարանի» գրչության վայրը, հայտնաբերում է պատմական Ծղուկ գավառի Թանահատի վանքը կամ Բղենո Նորավանքը, հմտորեն ստուգաբանում և մեկնաբանում է մեքոբա, արքան, դէմէքար, կապին, մեղուճա և այլ տերմիններ։ Բաքվի Թանգարանի բակում ընկած անհայտ տապանաքարի մի քանի կիսեղծ գրերից նա վերստեղծում է Համամ իշխանի տապանագիրը, որը սկզբնաղբյուրի բացառիկ նշանակություն է ստանում հայ-աղվանական առնչությունների ուսումնասիրության համար։

Հայագիտության և հայ արվեստի պատմության մնայուն երկերի շարքում՝ իր ուրույն տեղն ունի Ս. Բարխուդարյանի ծավալուն մենագրությունը միշնագարյան հայ ճարտարապետների, քարգործ-վարպետների մասին, որը հայրենասեր գիտնականի մեծարանքի տուրքն է անցյալի տաղանդավոր շինարարներին։

Սեդրակ Բարխուդարյանը իր վաստակաշատ կյանքի ուղին անցավ մաքուր խղճով և բաց ճակատով, սերունդներին կտակելով գիտական արժեքավոր ժառանգություն։ Անխոնջ գիտնականի սկսած գործերի ավարտումը և հրապարակումը լավագույն հավերժացում կլինի նրա պայծառ հիշատակին։

ՍՈՒՐԵՆ ԱՎԱԳՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Հ. ՄԱՆԱՆԴՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՀԱՎԵՐԺԱՑՈՒՄԸ

Ականավոր գիտնական-հայագետ, Երևանի պետական համալսարանի առաջին ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի հիշատակը հավերժացնելու նպատակով վերջերս ՀՍՍՀ Մինիստրների սովետը ընդունեց հատուկ որոշում, որի մեջ նախատեսվում է·

Հանձնարարել Երևանի քաղաքային սովետին ակադեմիկոս Հ. Մանանդյանի շիրմի վրա կանգնեցնել գիտնականի կիսանդրին և այն շենքի վրա, որ ապրել ու ստեղծագործել է Մանանդյանը (Տերյան, 62) փակցնել հուշատախտակ։

Բարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթության մինիստրությանը և գիտությունների ակադեմիային հանձնարարվում է՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում և ԳԱ պատմության ինստիտուտում սահմանել Հ. Մանանդյանի անվան մեկական ասպիրանտական թոշակ 110-ական ռուբլու չափով։